15/02/2006
համար 1/63Լ

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մամլո հրապարակումների կարգը» հաստատելու վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԱՄԼՈ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մամլո հրապարակումների կարգը»՝ համաձայն հավելվածի 1-ի (կցվում է):
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի 2003 թվականի մայիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մամլո հրապարակումների կարգը» հաստատելու մասին» թիվ 1/170Լ որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԱՀ՝ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված 1

Կարգ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԱՄԼՈ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) կողմից պարբերական մամլո հրապարակումների ձևերը և հաճախականությունը: Կենտրոնական բանկի այլ, ոչ պարբերական հրապարակումներն իրականացվում են Կենտրոնական բանկի մամուլի ծառայության կողմից ըստ անհրաժեշտության՝ Կենտրոնական բանկի նախագահի համաձայնությամբ:

2. Կենտրոնական բանկի կողմից պարբերաբար հրապարակվում են հետևյալ հաղորդագրությունները.

Ա) **«Կենտրոնական բանկի տոկոսադրույքների սահմանման վերաբերյալ»:** Հաղորդագրությունը հրապարակվում է Կենտրոնական բանկի տոկոսադրույքների վերաբերյալ Կենտրոնական բանկի խորհրդի նիստից հետո, որը պարունակում է Կենտրոնական բանկի խորհրդի նիստում տեղի ունեցած քննարկումների ամփոփումը՝ հակիրճ: Հրապարակումը պատրաստվում է Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության վարչության կողմից՝ Մամուլի ծառայության աջակցությամբ, որը հաստատվում է խորհրդի նիստի ժամանակ:

Բ) «**Կենտրոնական բանկի տոկոսադրույքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի նիստի ամփոփ արձանագրություն**»: Հաղորդագրությունը հրապարակվում է Կենտրոնական բանկի տոկոսադրույքների վերաբերյալ Կենտրոնական բանկի խորհրդի նիստից հետո տաս օրվա ընթացքում՝ ամսական կտրվածքով: Հրապարակումը պարունակում է հետևյալ տեղեկատվությունը.

1) Տնտեսության զարգացման և ֆինանսական շուկաների հիմնական միտումները.

ա) մակրոտնտեսական իրավիճակի համառոտ որակական նկարագիրը, հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների համառոտ վերլուծությունը և ապագային միտված գնահատականները, ինչպես նաև առանձին դեպքերում հատուկ ապրանքային շուկաների վերլուծությունը,

բ) ֆինանսական շուկաները բնութագրող հիմնական ցուցանիշների համառոտ վերլուծությունը և ապագային միտված գնահատականները:

2) Գնաճի կանխատեսումները.

ա) կանխատեսված և փաստացի գնաճի ցուցանիշների միջև շեղումների պարզաբանումները (եթե կան այդպիսիք),

բ) գնաճի ճշգրտված կանխատեսումները (եթե կան այդպիսիք):

3) Կենտրոնական բանկի տոկոսադրույքների սահմանման վերաբերյալ Կենտրոնական բանկի խորհրդի նիստում տեղի ունեցած քննարկումների ամփոփումը:

4) Կենտրոնական բանկ խորհրդի նիստում սահմանված տոկոսադրույքները:

Հրապարակումը պատրաստվում է Կենտրոնական բանկի մամուլի ծառայության կողմից՝ Դրամավարկային քաղաքականության վարչության կողմից տրված տեղեկանքների հիման վրա:

Գ) «**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի նիստում**»: Հաղորդագրությունը հրապարակվում է Կենտրոնական բանկի մամուլի ծառայության կողմից՝ Կենտրոնական բանկի խորհրդի նիստի օրը և պարունակում է խորհրդում քննարկված հարցերի մասին տեղեկատվություն, բացառությամբ բանկային և ծառայողական գաղտնիք պարունակող և դրամավարկային քաղաքականության վերաբերյալ հարցերի: Մասնավորապես, այն պետք է ընդգրկի տեղեկատվություն.

1) նոր ընդունվող կամ փոփոխվող նորմատիվ և անհատական ակտերի վերաբերյալ,

2) տրված, կասեցված կամ ուժը կորցրած ճանաչված լիցենզիաների վերաբերյալ,

3) ազդագրերի և արժեթղթերի գրանցման, ազդագրերի և արժեթղթերի գրանցումը կասեցնելու կամ արժեթղթերի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ,

4) արժեթղթերի վաճառքի կասեցման վերաբերյալ,

5) ինքնակարգավորվող կազմակերպությունների և դրանց կանոնների գրանցման վերաբերյալ,

6) բանկում կամ վարկային կազմակերպությունում ժամանակավոր ադմինիստրացիա նշանակելու և բանկի կամ վարկային կազմակերպության ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու վերաբերյալ,

7) օրենքով սահմանված կարգով պարտադիր հրապարակման ենթակա որոշումների վերաբերյալ:

Դ) **«Ֆինանսական համակարգի զարգացման միտումները»**: Հաղորդագրությունը հրապարակվում է ամեն եռամսյակ և պարունակում է հետևյալ տեղեկատվությունը.

1) ամփոփ տվյալներ ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և դրանց մասնաճյուղերի քանակի, բանկերի կապիտալի, ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև դրանց առանձին տարրերի դինամիկայի մասին նախորդ ժամանակաշրջանում:

2) ամփոփ տվյալներ ՀՀ բանկային համակարգի՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված նորմատիվային դաշտին համապատասխանության մասին: Տեղեկատվությունը տրվում է հետևյալ ֆորմատով՝ յուրաքանչյուր նորմատիվի համար առանձնացվում են մի շարք թվային միջակայքեր և յուրաքանչյուրի համար տրվում է այդ միջակայքում ցուցանիշներ ունեցող բանկերի թիվը՝ եռամսյակի վերջի դրությամբ:

3) ամփոփ տվյալներ ապահովագրական շուկայի մասին:

4) ամփոփ տվյալներ արժեթղթերի շուկայի մասին:

Սույն տեղեկատվությունը տրվում է աղյուսակի տեսքով: Այն տրամադրվում է Կենտրոնական բանկի մամուլի ծառայությանը Վիճակագրության վարչության կողմից՝ Ֆինանսական համակարգի քաղաքականության ու վերլուծությունների վարչության պետի համաձայնեցմամբ (վիզավորմամբ), յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 30-րդ օրը, և հրապարակվում եռօրյա ժամկետում: Ապահովագրական շուկայի մասին 4-րդ եռամսյակի ամփոփ տվյալները Մամուլի ծառայությանն են տրամադրվում տարեկան ամփոփ տվյալներով՝ հաջորդ տարվա մարտի 10-ին:

Արժեթղթերի շուկայի մասին ամփոփ տվյալները Կենտրոնական բանկի մամուլի ծառայությանը տրամադրվում են Վիճակագրության վարչության կողմից՝ Ֆինանսական համակարգի քաղաքականության ու վերլուծությունների վարչության պետի համաձայնեցմամբ (վիզավորմամբ), յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 15-րդ օրը, և հրապարակվում եռօրյա ժամկետում, իսկ 4-րդ եռամսյակի ամփոփ տվյալները Մամուլի ծառայությանն են տրամադրվում տարեկան ամփոփ տվյալներով՝ հաջորդ տարվա մայիսի 10-ին:

Ե) «**Կենտրոնական բանկի կողմից սահմանված արտարժույթների ամենօրյա հաշվարկային փոխարժեքների մասին հաղորդագրություն**»: Հաղորդագրությունը հրապարակվում է ամեն օր՝ զետեղվելով Կենտրոնական բանկի ինտերնետի «Տնային էջում», ինչպես նաև տրամադրվում է այլ տպագիր և էլեկտրոնային լրատվական միջոցների՝ ըստ նրանց կողմից հայտնված պահանջի: Տեղեկատվությունը ենթակա է հրապարակման Կենտրոնական բանկի նախագահի կողմից փոխարժեքի հաստատումից անմիջապես հետո: Այն տեղադրվում է Կենտրոնական բանկի տեղեկատվական համակարգերի կառավարման վարչության կողմից Կենտրոնական բանկի ինտերնետի «Տնային էջում» մինչև առավոտյան ժամը 9:30-ը:

Զ) **«Կենտրոնական բանկի հաշվեկշիռների և ՀՀ միջազգային պահուստների վիճակի և կազմի մասին տեղեկատվություն».**

1) Կենտրոնական բանկի եռամսյակային հաշվեկշիռը հրապարակվում է Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատվելուց հետո եռօրյա ժամկետում՝ Կենտրոնական բանկի հաշվապահական հաշվառման համար պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանման կողմից տրամադրված համապատասխան տեղեկանքի հիման վրա:

2) Կենտրոնական բանկի տարեկան հաշվեկշիռն ու ծախսերի և եկամուտների հաշվետվությունը հրապարակվում է Կենտրոնական բանկի խորհրդի և արտաքին աուդիտի կողմից հաստատվելուց հետո եռօրյա ժամկետում՝ Կենտրոնական բանկի հաշվապահական հաշվառման համար պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանման կողմից տրամադրված համապատասխան տեղեկանքի հիման վրա:

3) ՀՀ միջազգային պահուստների վիճակի և կազմի մասին տեղեկատվությունը հրապարակվում է Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատվելուց հետո եռօրյա ժամկետում՝ Կենտրոնական բանկի հաշվապահական հաշվառման համար պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանման կողմից տրամադրված համապատասխան տեղեկանքի հիման վրա:

Է) **«ՀՀ վճարահաշվարկային համակարգը»** հաղորդագրություն: Հաղորդագրությունը հրապարակվում է եռամսյակային կտրվածքով և պարունակում է հետևյալ տեղեկատվությունը.

1) ամփոփ տվյալներ՝ Կենտրոնական բանկի վճարային համակարգերում իրականացված վճարումների ծավալի և քանակի վերաբերյալ,

2) ամփոփ տվյալներ՝ միջազգային դրամական փոխանցումների համակարգերով արտասահման կատարված փոխանցումների և արտասահմանից ստացումների վերաբերյալ,

3) ամփոփ տվյալներ՝ ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից թողարկված (գործող) քարտերի, սպասարկման կետերի՝ այդ թվում ԱԳՄ-ների, և քարտերով կատարված գործառնությունների վերաբերյալ, և նախորդ ժամանակաշրջանի համեմատ գրանցված միտումները: Տրամադրվող տեղեկատվությունը կարող է պարունակել նաև տարբեր իրադրությունների հակիրճ բնութագրում:

Սույն տեղեկատվությունը հրապարակման նպատակով տրամադրվում է Կենտրոնական բանկի վճարային և տեղեկատվական համակարգերի զարգացման վարչության կողմից՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 15-րդ օրը:

3. Մամլո հաղորդագրություններ են հրապարակվում Կենտրոնական բանկի նախագահի պաշտոնական այցելությունների, ելույթների և հանդիպումների վերաբերյալ, Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող սուբյեկտների անվանափոխության, հասցեափոխության կամ մասնաճյուղերի գրանցման և գրանցման դադարեցման մասին, հաշվետու թողարկողների, մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց և ինքնակարգավորվող կազմակերպությունների կողմից կատարված խախտումների ուղղման նախազգուշացումների և կիրառված տուգանքների մասին:

4. Սույն կարգի իմաստով հրապարակում է համարվում տվյալ հաղորդագրությունը Կենտրոնական բանկի ինտերնետի «Տնային էջում» տեղադրումը և էլեկտրոնային փոստով զանգվածային լրատվության միջոցներին տրամադրումը՝ եթե այլ բան չի որոշվում Կենտրոնական բանկի նախագահի կողմից: